Արամ Իսաբեկյան. շնորհավորանք. «Հսկայական ներդրում» - թերթ, «Կրթություն», Ե., 26.03.2008

Մեծարգո պարոն խմբագիր

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ուսանողների, դասախոսների և իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ «Կրթության» թերթի 75-ամյա հոբելյանը: Անուրանալի է այն հսկայական ներդրումը, որ ունեցել է թերթը տասնամյակների իր գոյության ընթացքում: «Կրթությունը» ժառանգորդն է այն հիանալի ավանդույթների, որը ստեղծել են ժամանակի մեր հիանալի երախտավորները՝ Լ.Վադունին, Սիմակը, Ա.Բաղդասարյանը, Ա.Արսենյանը, Ս.Ղազարյանը և շատ ուրիշներ: Թերթը սիրված ու գնահատված է մեր օրերի կրթական հանրության կողմից այն բանի համար, որ նրա էջերում բարձրացվում են հրատապ հարցեր, տպագրված նյութերը վերաբերում են ոչ միայն կրթական-հասարակական խնդիրներին, այլ նաև երիտասարդության հայեցի դաստիարակությանը, հայկական կրթական լավագույն ավանդույթների մեկնաբանմանն ու պահպանմանը: Տպաքանակի աննախադեպ աճը վկայությունն է այն բանի, որ «Կրթություն»-ը պահանջված թերթ է, որ այն հետաքրքիր է հասարակական տարբեր խավերին: Կարևորում են նաև այն, որ նրա նյութերը ոչ միայն տեղեկատվական են, այլ նաև վերլուծական:

Կրկին շնորհավորում եմ Ձեզ և Ձեր խմբագրությանը, ցանկանում եմ թերթին հարատևություն:

Հարգանքներով՝ Արամ Իսաբեկյան

Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի ռեկտոր